

Հանրային քաղաքականության ինստիտուտի (ՀԶԻ) կողմից պատրաստված այս տեղեկագրի նպատակն է.

- Ամփոփել Հայաստանի կրթության ոլորտում վերջին ամիսների (հետհեղափոխական շրջանի) զարգացումները,
- ԿԳՆ կողմից պլանավորված կամ արդեն իրականացված ծրագրերը/բարեփոխումները,
- Կրթության ակտուալ հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ ՀԶԻ պատկերացումները:

Տեղեկագիրը կարող է լինել հանրային վերահսկողության գործիք՝ համեմատելու ոլորտի պատասխանատուների կողմից հնչեցված խոստումներն ու, որոշ ժամանակ անց, դրանց իրագործման մակարդակը:

2018թ. հունիսի 1-ին հաստատված Կառավարության ծրագրում նշվել էին կրթության և գիտության ոլորտի առաջնահերթությունները: Մասնավորապես, շեշտադրում էր կատարվել նախադպրոցական կրթության մատչելիության, փոքրաթիվ աշակերտական համակազմով դպրոցների արդյունավետ կառավարման, առարկայական Նոր ծրագրերի և չափորոշիչների ստեղծման, քննադատական և վերլուծական մտածողության վերաժևորման, ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման և աշխատաշուկայի հետ կապի ամրապնդման վրա (<https://goo.gl/riA6qA>, էջ 18):

Ստորև հակիրճ ներկայացված են կրթության ոլորտում կատարված կամ պլանավորված (խոստացված) փոփոխությունները.

➤ Դեռևս 2018թ. մայիսին ԿԳՆ տարբեր պաշտոնյաների կողմից կոռուպցիոն ռիսկերը հաղթահարելու, կրթական հաստատություններն ապակուսակցականացնելու և այդ խնդիրների դեմ պայքարելու մասին կոչեր են հնչեցվել (<https://goo.gl/rFM199>):

➤ 2019-2021թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով կառավարությունը նախատեսում է կրթությանը հատկացնել շուրջ 140 մլրդ. դրամ, ներկա 125 միլիարդի փոխարեն, իսկ մինչև 2021թ. այն հասցնել մինչև 176 մլրդ. դրամի (<https://goo.gl/8BTqqS>):

Նախադպրոցական կրթության բնագավառում.

➤ ԿԳՆ-ն նախատեսում է 2019թ.-ից Հայաստանի 201 համայնքներում ներդնել և ապահովել ավելի մատչելի նախադպրոցական կրթություն, ինչը ենթադրում է նաև այլընտրանքային մոդելների կիրառում (<https://bit.ly/2xS39tt>):

➤ Կառավարության անդամների կողմից ակնկալիք է բարձրաձայնվել՝ մոտ 4.5 մլրդ. դրամով բարձրացնելու նախադպրոցական և դպրոցական կրթության բյուջեն (<http://goo.gl/F7MHJc>):

Հանրակրթության բնագավառում.

➤ ԿԳՆ-ն որոշել է դադարեցնել գյուղական բնակավայրերի դպրոցների օպտիմալացման գործընթացը (<https://goo.gl/Vf1M21>): Այս որոշման համար հիմք է ծառայել նաև ՀԶԻ իրականացրած՝ «ՀՀ-ում դպրոցների օպտիմալացման գործընթացի մասնակցային մոնիտորինգ»-ի արդյունքները թեմայով կատարած հետազոտական աշխատանքը (<https://goo.gl/3tEmm6>), որտեղ դպրոցների օպտիմալացման բազմաթիվ հիմնախնդիրներ են ներկայացված:

➤ 2018թ. սեպտեմբերի 1-ից Արմավիրի մարզն անցում կատարեց համընդհանուր ներառական կրթության:

➤ Կառավարությունը՝ Ասիական բանկի հետ համատեղ, 107 մլն դոլար է տրամադրել հանրակրթական դպրոցների վերանորոգման և սեյսմակայունության ապահովման համար (<https://goo.gl/EVti5j>):

➤ ԿԳՆ-ն, Մշակույթի նախարարության հետ համատեղ, 35.000 աշակերտի հնարավորություն է ընձեռել տարբեր մշակութային հաստատություններ այցելել (<https://goo.gl/bJ6LVt>):

➤ 2018թ. օգոստոսի 22-ին Երևանում բացվել է հայ - չինական բարեկամության դպրոցը (<https://goo.gl/ikRdLC>):

➤ 2019թ.-ից առաջին դասարանցիների գրանցումը կատարվելու է առցանց տարբերակով (<https://goo.gl/psS2iM>):

➤ 2019թ. շարունակվելու է կրթական համակարգի համընդհանուր ներառականության անցումը (հաջորդ մարզերը Շիրակն ու Արագածոտն են):

➤ 2019թ. պլանավորվում է մանկավարժների վերապատրաստում, որի արդյունքում կբարձրանա ուսուցիչների աշխատավարձը (<https://goo.gl/RXRNM4>):

➤ 2019թ. սեպտեմբերից ԿԳՆ-ն պլանավորում է վերանայել կրթական չափորոշիչները, առարկայական ծրագրերն ու դասագրքերը (<https://goo.gl/P1XiDp>): Այս գործընթացը թափանցիկության և հանրային իրազեկման կարիք ունի, քանի որ մինչ այժմ չեն բարձրաձայնվել փոփոխությունների նպատակն ու ակնկալվող արդյունքները: Կարծում ենք՝ տեղեկատվական բացությունը թույլ կտա գործընթացն ավելի մասնակցային դարձնել:

➤ Կրթության ֆինանսավորման բանաձևի վերանայման արդյունքում, կիրառվելու է նոր, լրացուցիչ գործակից, որն ըստ դասարանների թվի է բաշխելու ֆինանսավորումը (<https://goo.gl/hWN2xC>):

Միջին մասնագիտական և բարձրագույն կրթության բնագավառներում.

➤ Վերսկսվել է բարձրագույն կրթության օրենքի նախագծի մշակումը: 2017թ.-ին նախորդ կառավարության կողմից առաջ էր քաշվել Բարձրագույն կրթության մասին օրենքի նոր նախագիծ, որը, սակայն, վերանայման պայմանով ապրիլին հետ էր կանչվել:

➤ Բարձրագույն կրթության օրենքի ընդունման արդյունքում Երևանի և մարզերի մի շարք բուհեր կգնան խոշորացման, որպեսզի համապատասխանեն ԿԳՆ առաջ քաշված պահանջներին (<https://goo.gl/faPXTs>):

➤ Մի շարք բուհեր, այդ թվում՝ ԵՊՀ-ն, այլևս գումար չեն հատկացնելու Հայաստանի երիտասարդական հիմնադրամին (որն աչքի է ընկել որպես կուսակցականացված կառույց): Տնտեսված գումարի մի մասը կարող է ուղղվել դասախոսների աշխատավարձի բարձրացմանը, ինչի մասին նշել է ԵՊՀ ռեկտորը:

➤ «Հանուն գիտության զարգացման» և «Ռեստարտ» նախաձեռնությունների բողոքների և առաջարկությունների արդյունքում վերանայվեց Տարկետման իրավունքի տրման կարգը, ըստ որի՝ ամռանը ակադեմիական տարկետում ստացավ 132 ուսանող (<https://goo.gl/ybfd9e>):

➤ Բայլեր են ձեռնարկվում Մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների (ՄԿՈԻ) և աշխատաշուկայի միջև կապերի զարգացման համար, ինչի մասին իրենց ասուլիսներում բազմիցս անդրադարձել են ԿԳՆ ներկայացուցիչները (<https://goo.gl/5zJqpx>):

ՀՔԻ դիտարկումներն ու առաջարկությունները

➤ Նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության խնդիրը դեռևս մնում է ամենաարդիականներից: Նախարարության կողմից առաջին քայլը, թերևս, պետք է լինի ՀՀ մարզերում կարիքների գնահատումն ու քարտեզագրումը՝ տեսնելու համար, թե որ համայնքում քանի երեխայի է պետք ապահովել նախադպրոցական կրթությամբ՝ համագործակցելով համայնքապետարանների և մարզպետարանների հետ: Պետք է հաշվի առնել նաև նախադպրոցական կրթության նորարարական մեթոդները, որոնք փորձարկվում են տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից: Նախադպրոցական կրթությունն ավելի հասանելի դարձնելու համար կարելի է օգտագործել նաև դպրոցական շենքերում ազատ կամ չգործարկված սենյակներն ու տարածքները՝ դրանք վերակազմակերպելով որպես նախակրթարաններ:

➤ ԿԳՆ-ն համընդհանուր ներառական կրթությանն անցումը դիտարկում է կրթական ոլորտի ռազմավարական քայլերից մեկը: Համընդհանուր ներառականության համար անհրաժեշտ է մասնագիտական անձնակազմերի վերապատրաստման մոտեցումների և բովանդակության վերանայում, ուսուցիչներին և նրանց օգնականներին անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների փոխանցում, դպրոցների մատչելիության և աշակերտների՝ կրթական գործընթացին ներգրավվածության ապահովում:

➤ Հունամանիտար ուղղվածություն ունեցող Չինական դպրոցի բացումը հանրակրթության կարևոր ձեռքբերումներից է: Այս դպրոցը շարունակում է տարբեր թեքումներով հանրակրթական դպրոցներ ունենալու ավանդույթը: Այս դպրոցը կնպաստի Հայաստանում օտարալեզու կրթության դիվերսիֆիկացմանը, իսկ շրջանավարտները նոր աշխատաշուկաներ և բնագավառներ մուտք գործելու հնարավորություն կստանան:

➤ Չափորոշիչների և առարկայական ծրագրերի վերանայման հարցը հետաքրքրում է ուսուցիչներին և ծնողներին: Գլխավոր հարցերից մեկն այն է, թե արդյոք չափորոշիչների և ծրագրերի վերանայման արդյունքում կնվազի աշակերտների ծանրաբեռնվածությունը: Ներկայումս կիրառվող դասագրքերի մի մասը աշակերտներին պարզապես ժամանակ չի թողնում ինքնակրթվելու և, տարբեր մեթոդներից օգտվելով, դասերը յուրացնելու համար: Իսկ նյութերի մի գերակշիռ մասն էլ հրամցված է խրթին ակադեմիական լեզվով, որն աշակերտների համար դյուրամարս չէ:

ՀԶԻ-ն առաջարկում է վերանայել գրքերի բովանդակությունը և, դասագրքերի տեսական մասը թեթևացնելու հետ մեկտեղ, ավելացնել փորձառական հմտությունների զարգացմանն ուղղված գործնական առաջադրանքները:

➤ ՀԶԻ-ն առաջարկում է ուսուցիչների՝ հաջորդ տարվանից սկսվող վերապատրաստումներում ներառել քաղաքացիական ակտիվության, մարդու իրավունքների և համամարդկային արժեհամակարգի զարգացմանն ուղղված կրթության բաղադրիչը:

➤ 2018թ. հուլիսին կայացավ ԿԳՆ նախարարին կից նորակազմ հանրային խորհրդի առաջին նիստը: Թեև խորհրդի աշխատանքները պետք է կայուն և պարբերական բնույթ կրեն, սակայն մինչև այժմ խորհրդի այլ նիստ չի գումարվել: ԿԳՆ նախագծերում և քննարկումներում հասարակական լայն շերտեր ներգրավելու համար հարկ է սահմանել խորհրդի հանդիպումների և քննարկումների հստակ ժամանակացույց: Կանխատեսելի ժամանակացույցի միջոցով, խորհրդի գործունեությունն ու նախարարության հետ կապն ավելի կամրապնդվի:

➤ Թեև ԿԳՆ պաշտոնյաները բազմիցս դիրքորոշում են հայտնել կրթական հաստատություններն ապակուսակցականացնելու մասին, սակայն ՀՀ բուհերի գերակշիռ մասում գործում են հոգաբարձուների նախկին խորհուրդները, որոնք շարունակում են գլխավորել նախկին իշխանության ներկայացուցիչները:

Այս փաստի առթիվ Ռեստարտ ուսանողական նախաձեռնությունը ևս իր մտահոգությունն է արտահայտել, և ուսումնական տարվա սկզբից մի քանի բուհերում ուսանողներն իրենց բողոքի ձայնն են բարձրացրել ռեկտորների և խորհուրդների հարցի վերաբերյալ:

ՀԶԻ-ն ևս կարծում է, որ հոգաբարձուների խորհուրդների ապակուսակցականացման գործընթացը պետք է հնարավորինս արագ (անհապաղ) կատարվի, քանի որ այն խաթարում է կրթական հաստատություններում կրթության կազմակերպման բնականոն ընթացքը:

➤ ԿԳ Նախարարի առաջարկը՝ միասնական քննական համակարգին անցման մասին, կրթության փորձագետների և շահագրգիռ անձանց մտահոգության առիթ դարձավ: Չնայած վերջերս ԿԳՆ-ն հայտարարություն տարածեց, որ գիտելիքների ստուգման միասնական քննական համակարգի անցումն այս ուսումնական տարում կկատարվի մասնակի, այնուամենայնիվ, սա ինդրի լուծման լավագույն և վերջնական տարբերակը չէ:

ՉԶԻ-ն առաջարկում է փոփոխությունների օրակարգ մտցնել 10-12 դասարաններում կրեդիտային համակարգի ներմուծումը, քանի որ միասնական քննությունների արդյունավետության նկատմամբ մեծ կասկած կա: Յուրաքանչյուր աշակերտ ուսումնառության 3 տարիների ընթացքում հնարավորություն կունենա կուտակելու որոշակի կրեդիտներ, որոնք հետագայում կօգտագործվեն բուհ ընդունվելու համար: Սահմանված չափով կրեդիտներ ստանալով՝ աշակերտները հաջողությամբ կավարտեն դպրոցը, ինչպես նաև՝ կընդունվեն բարձրագույն կրթական հաստատություններ:

➤ Արարատյան բակալավրիատի շուրջ ծավալվող քննարկումների շրջանակն այդպես էլ մնաց Նախարարության և Այբ հիմնադրամի միջև՝ չընդգրկելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և այլ շահագրգիռ կողմերին: Առողիտի/ ուսումնասիրության արդյունքներն այդպես էլ չհրապարակվեցին: Ամբողջ գործընթացում թափանցիկության պակաս կա:

ՉԶԻ-ն առաջարկում է հանրային լսումներ կամ քննարկումներ անցկացնել Այբ հիմնադրամի, Նախարարության ներկայացուցիչների և շահագրգիռ այլ կողմերի հետ՝ առաջարկությունների ու կարծիքների փոխանակման համար:

➤ Չնայած գյուղական համայնքներում դպրոցների օպտիմալացման ծրագիրը դադարեցվել է, այնուամենայնիվ, կրթական գործընթացն ավելի արդյունավետ կամակերպելու համար ՉԶԻ-ն առաջարկում է կիրառել վարչական օպտիմալացման մոդելը: Մի քանի դպրոցներ կարող են միավորվել որպես մեկ իրավաբանական անձ՝ միաժամանակ պահպանելով յուրաքանչյուր դպրոցի մանկավարժական անձնակազմն ու կրթության կազմակերպման միջավայրը (դպրոցի շենքը): Այս մոտեցումը թույլ կտա բյուջեի միջոցների ինայողություն անել՝ միաժամանակ պահպանելով դպրոցների մանկավարժական կազմը:

Մասնակի՝ վարչական օպտիմալացման շնորհիվ կկրճատվի վարչական անձնակազմի (տնօրեններ, փոխտնօրեններ, հաշվապահներ, այլ) թվաքանակը, իսկ տնտեսված միջոցները կուղղվեն միավորված դպրոցներին: Այս մոդելի կիրարկման արդյունքում ակնկալվում է միավորված դպրոցի կառավարման խորհրդի կարողությունների ուժեղացում և դրա անկախության մակարդակի բարձրացում (նոր անձանց մուտքի շնորհիվ): Կընդլայնվեն աշակերտների՝ տարատեսակ կրթական ծառայություններից օգտվելու հնարավորությունները, քանի որ միավորված դպրոցները մեկը մյուսին կփոխլրացնեն իրենց ուժեղ կողմերով (օրինակ՝ մի դպրոցում դասավանդման նորարար մեթոդներ են օգտագործվում, մյուսում՝ զարգացած ենթակառուցվածքներ կան, և այլն): Այս մոդելը

հնարավորություն կտա նաև ֆինանսական միջոցներ տնտեսել և դրանք ուղղել ոլորտային բացերի լրացմանը:

➤ Այն դպրոցները, որոնք օպիտմալացման նախկին ծրագրով ենթակա էին վերակազմակերպման, շահագրգիռ կողմերի աջակցությամբ կարող են կազմել գործողությունների ծրագիր՝ միտված կրթության որակի բարելավմանը, կրթական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը, կրթության կազմակերպման միջավայրի բարելավմանը, ֆինանսական միջոցների առավել արդյունավետ տնօրինմանը, և այլն:

Այս մոտեցումը համահունչ է լավագույն միջազգային փորձին, երբ դպրոցի փակման փոխարեն վերջինիս բարեփոխման և զարգացման հնարավորություն է ընձեռվում:

➤ Տարկետման իրավունքի տրման շուրջ քննարկումները շարունակում են արդիական մնալ: 2018թ. հոկտեմբերի 4-ին կառավարությունը հանդես է եկել ապրիլին հրապարակված որոշումը փոփոխելու նախագծով: Չնայած նոր նախագիծը մեկ քայլ առաջ է, սակայն ՀԶԻ-ն գտնում է.

- Նոր նախագծում անհրաժեշտ է հստակ սահմանել, թե ինչ նպատակ է հետապնդում տարկետման իրավունքի շնորհումը: Համապատասխան ձևակերպումների բացակայությունը տարընթերցումների պատճառ է դառնում և խթանում է այն տարածված տեսակետը, թե տարկետումն ընդամեն զինվորական ծառայությունից խուսափելու առիթ է: Թե հասարակության լայն շերտերի, թե ոլորտի մասնագետների համար հստակ և միանշանակ չեն տարկետում տրամադրելու նպատակները, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները:
- Տարկետում տրամադրելու հնարավոր պայմաններից մեկը կարող է լինել, օրինակ, գիտական աստիճան ստանալուց հետո որոշակի ժամանակահատված (3 կամ 5 տարի) գիտամանկավարժական գործունեություն ծավալելը:
- Առաջարկվող փոփոխության արդյունքում որոշումից դուրս են հանվում «գերակա ուղղություններ»-ը, որպեսզի արվեստագետները նույնպես հնարավորություն ունենան տարկետման իրավունք ստանալ: Այս փոփոխության արդյունքում բաց է մնալու այն հարցը, թե ինչպես, ինչ սկզբունքներով և համամասնությամբ են բաժանվելու տարկետման տեղերը բուհերի կամ մասնագիտությունների միջև: ՀԶԻ-ն առաջարկում է տարկետման իրավունքի տրամադրման գործող կարգից պահպանել «գերակա ուղղություններ»-ի մոտեցումը/գաղափարը: Կարծում ենք՝ գերակա ուղղությունները յուրաքանչյուր տարի պետք է սահմանվեն կառավարության համապատասխան որոշումով: «Գերակա ուղղությունների»-ի՝ տարեկան վերանայման հնարավորությունը բավարար ճկունություն կապահովի՝ հաշվի առնելու թե՛ գիտության ու կրթության ոլորտի, թե՛ աշխատաշուկայի ու տնտեսության նոր պահանջները:
- Նախագծով առաջարկվում է գործող ընթացակարգից հանել հանձնաժողովների և հարցազրույցների բաղադրիչը, քանի որ հանրության կողմից այն դիտարկվում է որպես

սուբյեկտիվ գործոն: Հաշվի առնելով, որ միջազգային շատ բուհերում հարցազրույցն ընդունելության մի փուլ է համարվում, առաջարկում ենք հանձնաժողովի կողմից հարցազրույցը (որպես տարկետում ստանալու բաղադրիչներից մեկը) պահել՝ փոփոխելով ձևաչափը: Հանձնաժողովում կարող են ներգրավված լինել ԿԳ և Պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ, ինչպես նաև տարբեր ոլորտային փորձագետները: Հարցազրույցը թույլ կտա հասկանալ տվյալ անձի՝ տարկետում ստանալու մոտիվացիան, հետագա մասնագիտական և գիտական նպատակները, այլ կարողությունները:

- Խնդրահարույց է նաև տարկետման իրավունքի տրամադրման ներկայիս բանաձևը: Հարց է առաջանում, թե որքանով է այն կիրառելի տարբեր մասնագիտությունների համար: Այդ պատճառով, ընդհանուր կարգի շրջանակներում կարելի է տարբեր ենթակարգեր սահմանել՝ հարմարեցված տարբեր գիտակարգերի կամ մասնագիտությունների առանձնահատկություններին (օրինակ, որոշ գիտակարգերի շրջանակներում հողված հրապարակելն ավելի դյուրին է, քան մյուսներում):

Հոկտեմբերի 18, 2018

Գոհարիկ Տիգրանյան

Հանրային քաղաքականության ինստիտուտ